ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«31» մարտի 2025թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 16-րդ օրվա (27.03.2025թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 28.03.2025թ.՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Ձայնագրառման համակարգեր	99450000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Արման Ադամյան ԱՁ	huga2222
ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	ք. Երևան, Չարենցի 37

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Արման Ադամյան ԱՁ	82875000	20%	99450000	75000000	20%	90000000.00	
1	ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	82874500	20%	99449400	77000700	20%	92400840.00	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 28.03.2025թ.՝ ժամը 11:30-ին և Արման Ադամյան ԱՁ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը գբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման) մասին.

Արման Ադամյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը (հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է), Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Արման Ադամյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ մերժված հայտերի և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

8.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց Արման Ադամյան ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

8.2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- մյուս մասնակցի՝ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հայտը մերժել,
- գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիթյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Ձայնագրառման համակարգեր Ձայնագրառման համակարգի մեկ լրակազմն իր մեջ պետք է ներառի. Համակարգիչ " պրոցեսոր առնվազն՝ 3.0GHz առնվազն 4C, առնվազն 8T, առնվազն 6MB Cache, " օպերատիվ հիշողություն՝ առնվազն 8GB DDR4, " կոշտ սկավառակ (ներքին)՝ առնվազն 240GB SSD, " կոշտ սկավառակ (ներքին)՝ առնվազն 1TB, 7200 RPM, SATA, " ներկառուցված գրաֆիկական քարտ (VGA), " առնվազն 6 հատ USB 2.0/3.0, " ցանցային քարտ 10/100/1000 Mbit, " սկավառակակիր (ներքին)՝ DVD-RW, " Windows 10/11 Professional 64bit ՕՀ (արտոնագրված և ակտիվացված (անժամկետ)), " առնվազն Microsoft Office Home and Business 2019 (արտոնագրված և	Արման Ադամյան ԱՁ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի <u>4-րդ կետի</u>	Արման Ադամյան ԱՁ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ - մյուս մասնակցի՝ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հայտը մերժվել է, - գնման ընթացակարգը հայտարարվել է

	ակտիվացված (անժամկետ)) կամ առնվազն Open Office 4.1.13 64bit (տեղադրված) կամ առնվազն Libre Office 7.4.5 64bit (տեղադրված), " ձայնագրառման ծրագիր (արտոնագրված և ակտիվացված (անժամկետ)), " ստեղնաշար՝ USB (լարով), " համակարգչային մկնիկ՝ USB (լարով): Մոնիտոր " LED կամ IPS, " առնվազն՝ 23.0 դյույմ, " 16:9, " առնվազն 1920x1080, " առնվազն 75Hz, " արձագանքման ժամանակը մինչև 6մվ, " առնվազն VGA մուտք, " 1 հատ հոսանքի մալուխ, " 1 հատ մալուխ մոնիտորը համակարգչին միացնելու համար: Լազերային տպիչ " լազերային, A4 ֆորմատի, " տպելու արագությունը՝ առնվազն 38 էջ/ր., " տպելու խտություն՝ մինչև 1200x1200 dpi, " երկկողմանի տպելու հնարավորություն, " առաջին տպվող էջի դուրս գալու ժամանակահատվածը՝ մինչև 7վ., " հիշողություն՝ առնվազն 256MB, " միացման տեսակը՝ առնվազն USB 2.0 (Hi-Speed), " Gigabit Ethernet 10/100/1000BASE-T, " ամսական ծանրաբեռնվածությունը՝ առնվազն 50000 էջ, " քարթրիջ, " քարթրիջի ռեսուրս, առնվազն 3000 էջ, " պրոցեսորի արագություն՝ առնվազն 800 MHz, " համատեղելի Windows			չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

	10, 11 Professional ՕՀ-երի հետ, " տպիչի համար նախատեսված ծրագրային ապահովում (driver) CD կամ DVD կրիչով, " USB մալուխ, " հոսանքի մալուխ: Անխափան սնուցման սարք " առնվազն 650ՎԱ, " ավտոնոմ աշխատանքի ժամանակահատվածը՝ առնվազն 5ր, " մուտքային լարում՝ 230Վ, մուտքային լարման տիրույթ՝ -/+25%, " անցման ժամանակահատված՝ 6-10Մվ, " ելքային բնիկներ՝ առնվազն երկու հատ: Դատական ձայնագրառման համակարգ " ձայնագրառման ծրագիր CD կամ DVD կրիչով, օգտագործողի ձեռնարկ (էլեկտրոնային կամ թղթային տարբերակով), ծրագրի ադմինիստրատորի ձեռնարկ (էլեկտրոնային կամ թղթային տարբերակով), " միկշեր, բազմաալիքային աուդիո ինտերֆեյս, Audio Interface 8x4 USB, " դինամիկ կամ կոնդենսատորային խոսափող (6 հատ), " խոսափողի պատվանդան (6 հատ), " աուդիո մալուխ, առնվազն 5մ (6 հատ)՝ համապատասխան կցորդիչներով, " ոտնակ (USB), " էլեկտրոնային բանալի (USB տեսակի), " դինամիկ ականջակալ միկշերին միացնելու հնարավորությամբ (1 հատ): Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:			

	Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին: Ձայնագրառման համակարգերի (լրակազմերի) համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 2 տարի:			

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնումների համակարգող Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ **010511783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**